

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(34)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2008

ՇՈՒՇԱՆ ՊԱՐՈՆՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՅԱՂՈՒԲՅԱՆ

ՋԵՂԶՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱԵՎՈՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, գործաբանական լեզվաբանությունը «մարդակենտրոն» է, նրանում ելակետայինը խոսող անհատն է, որի հոգեկան աշխարհի դրսևորումների և հասարակական գործունեության հաշվառումով էլ կատարվում է խոսքի քննությունը: Ի տարբերություն այն լեզվաբանական ուսմունքների, որոնք ուսումնասիրում էին լեզվական համակարգի օրինաչափությունները, գործաբանները սկսեցին նման կարգի օրինաչափություններ փնտրել խոսքում: Եթե լեզվական համակարգին հատուկ օրինաչափությունները վերացական են և բնորոշվում են որպես այդ համակարգին բնորոշ յուրահատուկ դրսևորումներ, խոսքին հատուկ օրինաչափություններում ելակետային է խոսող անհատը. նա է կատարում խոսքային այս կամ այն միջոցի ընտրությունը, կառուցում է իր խոսքը հաղորդակցական պահանջներին համապատասխան: Խոսքն այնքան էլ ցաքուցրիվ, անկանոն չէ, ինչպես ենթադրվում էր առաջ: Այն ունի իրեն հատուկ նորմերը, որոնցով էլ պայմանավորված է խոսքային գործունեության բնականոն ընթացքը:

Ըստ գործառության մոտեցման՝ լեզուն, որպես մարդկային հաղորդակցական միջոց, մարդու հասարակական գործունեության ձևերից մեկն է, որն իրականանում է հաղորդակցման օրինաչափությունների իմացության միջոցով: Չետևաբար, ինչպես ենթադրում է Պ. Ջերնեցկին, խոսքային գործունեության ընթացքում կարևորվում են հաղորդակցական իրադրության այն չափանիշները, որոնցով պայմանավորված է հաղորդակցման սցենարը, գրուցակիցների խոսքային վարքի ծրագրավորումն ըստ տվյալ հաղորդակցական իրադրության մեջ իրենց ունեցած դերի, գրուցակիցների խոսքային ռազմավարության և մարտավարության (Зернецкий, 1988, 36):

Լեզվաբանության մեջ ընդունված է գեղջումը դիտարկել որպես բառի բացթողման շարահյուսական հնար: Սակայն, խոսքի գործադրման տեսանկյունից դիտարկելիս հնարավոր է դառնում գեղջման երևույթը մեկնաբանել որպես խոսքային քաղաքականության դրսևորման միջոցներից մեկը: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել գեղջման գործաբանական դերը խոսքում որպես խոսքային ռազմավարության միջոց և մարտավարության դրսևորում:

